Հեղինակ՝ Էլիզա Քեռշկարյան

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Նպատակը՝

Ծանոթացնել երեխային հրշեջի, ոստիկանի, բժշկի և գազի սպասարկման ծառայողի աշխատանքին, բացատրել, թե ե՞րբ և ինչպե՞ս կարելի է նրանց դիմել: Նյութը սովորեցնում է նաև վտանգի դեպքում կողմնորոշվել և ահազանգել համապատասխան հեռախոսահամարով:

Անհրաժեշտ պարագաներ ՝

Հրշեջի, ոստիկանի, բժշկի, գազի սպասարկման ծառայություն իրականացնող մասնագետների պատկերներով քարտեր, նրանց համապատասխան մեքենաների նկարներ և հեռախոսահամարների ցանկ:

Ընթացքը՝

Երեխային ցույց տալ հրշեջի, ոստիկանի, բժշկի և գազի սպասարկման աշխատողի պատկերներով քարտեր, նկարագրել նրանցից յուրաքանչյուրի գործունեությունը, նրանց կատարած աշխատանքը: Այնուհետև ցույց տալ, թե նրանք սովորաբար ի՞նչ մեքենայով են լինում, ասել, թե ի՞նչ է սովորաբար լինում մեքենայի մեջ: Խաղը էլ ավելի հետաքրքրիր դարձնելու նպատակով կարող եք շփոթեցնել երեխային և, օրինակ՝ բժշկին նստեցնել ոստիկանի կամ հրշեջի մեքենայի մեջ: Այնուհետև սովորեցնել, թե ո՞ր դեպքում և ինչպե՞ս կարելի է օգտվել այդ ծառայություններից:

Սիրելի՛ փոքրիկ, այժմ կծանոթանանք հրշեջի մասնագիտությանը: Հրշեջներն օգնում են այն ժամանակ, երբ հրդեհ է բռնկվում: Նրանք արագ դեպքի վայր են հասնում համապատասխան մեքենայով, որի մեջ շատ ջուր կա,և արագ մարում են կրակը: Նրանք նույնիսկ կարողանում են բարձրահարկ շենքից մարդկանց իջեցնել և փրկել: Եթե ցանկանում ես, որ նրանք արագ օգնության հասնեն, պետք է զանգահարես՝

1-01- Հրշեջ փրկարար ծառայություն

Այժմ արի ծանոթանանք, թե հրշեջները սովորաբար ինչ մեքենայով են օգնության հասնում: Դե, ինչպես արդեն իմացար, նրանք իրենց մեքենայի մեջ ունենում են շատ մեծ քանակությամբ ջուր, որ անհրաժեշտ պահին կարողանան հանգցնել կրակը: Վստահ եմ, որ փողոցում հանդիպել ես բոլորի ուշադրությունը գրավող ազդանշանով մեքենային՝ իր ամենօրյա աշխատանքի ժամանակ:

Իսկ այժմ հավաքիր հրշեջ մեքենայի մասերն ու կստանաս նրա ամբողջական պատկերը, որից հետո հրշեջին տեղափոխիր իր մեքենայի մոտ:

01
101 ПОЖАРНАЯ СЛУЖБА


101




01
101 ПОЖАРНАЯ СЛУЖБА
101

1-01

01
101 ПОЖАРНАЯ СЛУЖБА
101

Այժմ եկեք ծանոթանանք ոստիկանի մասնագիտությանը: Նրանք պաշտանում են հասարակական կարգը և մարդու իրավունքները օրենքի ողջ խստությամբ: Նրանք օգնում են մարդկանց, պաշտպանում զանազան վտանքներից: Եթե ցանկանում ես, որ նրանք արագ օգնության հասնեն, պետք է զանգահարես՝

1-02- Ոստիկանություն

Այժմ արի ծանոթանանք, թե ոստիկանները սովորաբար ինչ մեքենայով են օգնության հասնում կամ հսկում հասարակական կարգը, վստահ եմ, որ փողոցում հանդիպել ես բոլորի ուշադրությունը գրավող ազդանշանով մեքենային իր ամենօրյա աշխատանքի ժամանակ:

Այժմ հավաքի՛ր ոստիկանի մեքենայի մասերն ու կստանաս նրա ամբողջական պատկերը, որից հետո ոստիկանին տեղափոխիր իր մեքենայի մոտ:



1-02

Իսկ այժմ կծանոթանանք բժշկի մասնագիտությանը: Բժիշկները շատ կարևոր, բարդ ու դժվարին աշխատանք են իրականացնում, քանի որ գործ ունեն մարդկային կյանքի հետ: Նրանք բուժում են մարդկանց, ցուցաբերում առաջին բժշկական օգնություն: Եթե որևէ մեկն իրեն լավ չի զգում, կարող է դիմել բժշկին՝ զանգահարելով՝

1-03- Շտապ բժշկական օգնություն

Այժմ արի ծանոթանանք, թե բժիշկները սովորաբար ինչ մեքենայով են օգնության հասնում: Նրանք իրենց մեքենայի մեջ ունենում են բժշկական գործիքներ, անհրաժեշտ ամեն ինչ, որ կարողանան հիվանդին համապատասխան օգնություն ցուցաբերել: Վստահ եմ, որ փողոցում հանդիպել ես բոլորի ուշադրությունը գրավող ազդանշանով մեքենային՝ իր ամենօրյա աշխատանքի ժամանակ:

Այժմ հավաքիր բժշկի մեքենայի մասերն ու կստանաս նրա ամբողջական պատկերը, որից հետո բժշկին տեղափոխիր իր մեքենայի մոտ:









1-03

Իսկ հիմա կծանոթանանք գազի սպասարկման ծառայողի հետ: Ինչպես բոլորը, նրանք էլ կարևոր աշխատանք են կատարում բոլորիս համար: Դու գիտես, որ գազը վառելիք է, որի միջոցով իրականացվում են բազմաթիվ աշխատանքներ. դրանով կարելի է տաքացնել բնակարանը, հոգալ առօրյա գործերը, համեղ ուտեստներ պատրաստել և այլն:

Սակայն պետք է հիշել, որ գազը թունավոր է, և անհրաժեշտ է պահպանել անվտանգության կանոններն ու շատ զգույշ լինել այն օգտագործելիս:

Իսկ եթե վթար է տեղի ունեցել, պետք է արագ ահազանգել՝

1-04 գազի սպասարկման ծառայություն

Իսկ այժմ հավաքի՛ր գազի սպասարկման ծառայության մեքենայի մասերն ու ստացիր նրա ամբողջական պատկերը, որից հետո գազի սպասարկողին տեղափոխիր իր մեքենայի մոտ:

04

АВАРИЙНАЯ ГАЗОВАЯ СЛУЖБА

04
АВАРИЙНАЯ ГАЗОВАЯ СЛУЖБА

1-04

04
АВАРИЙНАЯ ГАЗОВАЯ СЛУЖБА

Այժմ, երբ ծանոթ ես սոցիալական ծառայություններ տրամադրող մասնագետներին, արի վերհիշենք, թե ինչպես էինք զանգահարում նրանց:

1-01



1-02



1-03



1-04



Վերջում ամփոփել և հարց ու պատասխանի միջոցով պարզել, թե ինչ սովորեցինք:

Խաղի դետալներով ու պատկերներով կարելի է պատրաստել լոտո և նյութը մատուցել քարտային տարբերակով:

	Հրշեջ	Ոստիկան	Բժիշկ	Գազի սպասարկող
Մասնագետ				
Ավտոմեքենա				
Հեռախոսահամար				

	Հրշեջ	Ոստիկան	Բժիշկ	Գազի սպասարկող
Մասնագետ				
Ավտոմեքենա				
Հեռախոսահամար	1-01	1-02	1-03	1-04